ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Տավուշի մարզի «Նորաշենի Փ.Կ.Ավագյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի անգլերենի/ 18 դասաժամ /, կենսաբանության / 10 դասա-ժամ / և ՆԶՊ-ի ուսուցչի թափուր տեղերի համար:

ՈՒսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

-Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

-Անձնագրի պատճենը,

-Ինքնակենսագրություն (Ձև 4),

-Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

-Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

-Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

ՀՀ արական սեռի քաղաքացինեը ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **սեպտեմբերի 05-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 09-ին՝** ժամը 15 : 00-ին, Տավուշի մարզի Նորաշենի Փ.Կ. Ավագյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ գ. Նորաշեն, 4 փ շենք 1:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 077121777, 077716535 հեռախոսահամարներով: